

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ----- 2022թ.

N-----Ա

### ՈՐՈՇՈՒՄ

#### ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Իմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

#### **Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1.Տալ համաձայնություն.

1) լրագրող, արձակագիր, թարգմանիչ Այդին Մորիկյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Ղազար Փարպեցու փողոց հ.11ա հասցեում փակցնելու համար,

2) ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, ակադեմիկոս Հրանտ Ադոնցի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Բաղրամյան պողոտա հ.50 հասցեում փակցնելու համար,

3) պատմաբան, հայագետ, մանկավարժ, պրոֆեսոր Տաճատ Սահակյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Սուրբ Գրիգոր Լուսավորչի փողոց հ.17 հասցեում փակցնելու համար,

4) օրթոպեդ - վնասվածքաբան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ Քրիստափոր Պետրոսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Ամիրյան փողոց հ.8 հասցեում փակցնելու համար,

5) պետական, քաղաքական գործիչ Միսակ Մկրտչյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Կիլյան փողոց հ.18 հասցեում փակցնելու համար,

6) պետական և հասարակական գործիչ Բերսաբե Գրիգորյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Զարոբյան փողոց հ.12 հասցեում փակցնելու համար:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ**

## ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### «ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Լրագրող, արձակագիր, թարգմանիչ **Այդին Մորիկյանը** ծնվել է 1958 թվականի ապրիլի 18-ին, Երևանում:

1975 թվականին ավարտել է Ստ. Շահումյանի անվան միջնակարգ դպրոցը և նույն թվականին ընդունվել Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը:

1978 թվականին ուսանողների փոխանակման ծրագրով տեղափոխվել է Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետ:

Մոսկվայի համալսարանն ավարտելուց հետո՝ 1981 թվականին, վերադարձել է Երևան և 1981-1982 թվականներին աշխատել «Երևանի համալսարան» թերթում՝ իբրև թղթակից, իսկ 1982-1983 թվականներին՝ «Ավանգարդ» թերթի թղթակից: 1983-1987 թվականներին եղել է ՀԼԿԵՄ կենտկոմի հրահանգիչ:

1987 թվականին նշանակվել է «Ավանգարդ» թերթի գլխավոր խմբագրի տեղակալ և այդ պաշտոնը վարել մինչև 1990 թվականը:

1988 թվականի դեկտեմբերին գործուղվել է Սպիտակ՝ վերականգնելու շրջանային «Լուսարձակ» թերթը, որի խմբագրակազմի անդամների մի մասը զոհվել էր երկրաշարժի ժամանակ: «Լուսարձակ»-ի ժամանակավոր խմբագրությունը գլխավորել է մինչև 1989 թվականի փետրվար:

ՀՀ Գերագույն խորհրդի 1990 թվականի սեպտեմբերի 7-ի որոշմամբ ստեղծվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթը, որի առաջին խմբագիր նշանակվել է Այդին Մորիկյանը և գլխավորել է մինչև 1997 թվականը: 1995 թվականին, համատեղությամբ, եղել է նաև ՀՀ տեղեկատվության փոխնախարարը:

2000-2002 թվականներին եղել է «Հայացք Երևանից» ամսագրի, իսկ 2002-2003 թվականներին՝ «Օրրան» թերթի գլխավոր խմբագիրը, 2007-2008 թվականներին՝ «Ժամանակ Երևան» թերթի խմբագիրը:

2004-2009 թվականներին դասավանդել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանության և լեզվաբանության ֆակուլտետի լրագրության բաժնում:

Մորիկյանի հոդվածներն ու թարգմանությունները հրատարակվել են «Ավանգարդ», «Հայաստանի Հանրապետություն», «Առավոտ», «Հայկական ժամանակ», «Օրրան» թերթերում, «Հայացք Երևանից» և «Գարուն» ամսագրերում:

Այդին Մորիկյանը մահացել է 2009 թվականի մայիսի 19-ին:

Այդին Մորիկյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Ղազար Փարպեցու փողոց հ.11ա հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել Երևանի մամուլի ակումբի նախագահ Բորիս Նավասարդյանի, Խոսրոի ազատության

պաշտպանության կոմիտեի նախագահ Աշոտ Մելիքյանի, լրագրող, արձակագիր Մեսրոպ Հարությունյանի կողմից:

ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, ակադեմիկոս **Հրանտ Ադոնցը** ծնվել է 1914 թվականի սեպտեմբերի 15-ին, Բաքվում:

1940 թվականին ավարտել է Բաքվի ինդուստրիալ ինստիտուտը: 1956-1959 թվականներին եղել է ՀԽՍՀ ԳԱ էլեկտրատեխնիկայի լաբարատորիայի տնօրեն, 1959-1961 թվականներին՝ էլեկտրատեխնիկայի ինստիտուտի տնօրեն, 1961-1963 թվականներին՝ էներգետիկայի ինստիտուտի տնօրեն: 1963-1978 թվականներին եղել է էներգետիկայի հայկական գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն, 1978-1982 թվականներին՝ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի էլեկտրակայանների, համակարգերի և ցանցերի ամբիոնի վարիչ: 1982-1984 թվականներին՝ ՀԽՍՀ ԳԱ նախագահության ֆիզտեխնիկական և մեխանիկայի բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար: Նրա ղեկավարությամբ ստեղծվել է նոր ավտոմատացված անալոգային հաշվողական մեքենա, որը ներդրված է Չիտաէներգո, Կիրգիզէներգո, Սոլոբվէներգո և այլ էներգահամակարգերում:

Հրանտ Ադոնցը մահացել է 1987 թվականին:

ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, ակադեմիկոս Հրանտ Ադոնցի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Բաղրամյան պողոտա հ.50բ հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել նրա դուստր Վալենտինա Ադոնցի կողմից:

Պատմաբան, հայագետ, մանկավարժ, պրոֆեսոր **Տաճատ Սահակյանը** ծնվել է 1916 թվականին Սիսիանի շրջանի Բռնակոթ գյուղում:

1936 թվականին նա գերազանց առաջադիմությամբ ավարտել է շրջկենտրոնի միջնակարգ դպրոցը: Այնուհետև ընդունվել է Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը:

1940 թվականին ավարտելով ինստիտուտը գերազանցության դիպլոմով, Տաճատ Սահակյանը վերադարձել է հայրենի գյուղ և զբաղվել մանկավարժությամբ:

Մեծ հայրենական պատերազմի ժամանակ մեկնել է ռազմաճակատ և 1940-1943 թվականներին ծառայել է Խորհրդային բանակում:

Վիրավորվելուց հետո զորացրվել է և մեկնել հայրենի գյուղ, տեղի դպրոցում աշխատել որպես ուսմասվար և պատմության ու գերմաներենի ուսուցիչ:

1944 թվականին ընդունվել է Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի ասպիրանտուրա: 1949 թվականին պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա և ստացել պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, 1956 թվականին արժանացել է դոցենտի կոչմանը: Վաստակաշատ պատմաբանը 50 տարի շարունակ հայ ժողովրդի պատմության հատուկ դասընթաց է կարդացել Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության և բանասիրական ֆակուլտետներում:

Տաճատ Սահակյանը պարգևատրվել է Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշանով, ՀՍՍՀ Գերագույն Սովետի պատվոգրով, Խաչատուր Աբովյանի անվան մեդալով, «Ժողովրդական կրթության գերազանցիկ» կրծքանշանով և այլն:

Տաճատ Սահակյանը մահացել է 1999 թվականի հունվարի 16-ին:

Տաճատ Սահակյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Սուրբ Գրիգոր Լուսավորչի փողոց հ.17 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել նրա դուստր Սահականուշ Սահակյանի կողմից:

Պետական, քաղաքական գործիչ **Միսակ Մկրտչյանը** ծնվել է 1938 թվականին Լենինականում (Գյումրի):

1967 թվականին ավարտել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտը՝ մաթեմատիկոս-մանկավարժի որակավորմամբ, 1979 թվականին՝ Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը՝ տնտեսագետի որակավորմամբ:

1957-1967 թվականներին Լենինականի թիվ 7 դպրոցում աշխատել է որպես ավագ ջոկատավար, մաթեմատիկայի ուսուցիչ, 1961-1965 թվականներին՝ ՀԼԿԵՄ Լենինականի քաղկոմի դպրոցական բաժնի վարիչ, 1966-1967 թվականներին՝ քաղկոմի առաջին քարտուղար՝ 1967-1975 թվականներին՝ ՀԼԿԵՄ Կենտկոմի քարտուղար, 1975-1979 թվականներին եղել է ՀԿԿ ԿԿ կազմակերպական բաժնի տեսուչ, 1979-1988 թվականներին՝ ՀԿԿ Ախուրյանի շրջկոմի առաջին քարտուղար, 1988-1989 թվականներին՝ ՀԿԿ Լենինականի քաղկոմի առաջին քարտուղար, 1989-1991 թվականներին՝ ՀԿԿ Կենտկոմի կազմակերպական բաժնի վարիչ, 1997-1998 թվականներին՝ ՌԴ հաղորդակցության ճանապարհների նախարարության լիազոր ներկայացուցիչը Հայաստանում:

Միսակ Մկրտչյանը չորս անգամ ընտրվել է Հայաստանի խորհրդարանի պատգամավոր:

Պարգևատրվել է «Պատվո նշան» (1971թ.), Աշխատանքային կարմիր դրոշի (1973թ.), Հոկտեմբերյան հեղափոխության (1984թ.) շքանշաններով:

Միսակ Մկրտչյանը մահացել է 2018 թվականի ապրիլի 26-ին, Երևանում:

Միսակ Մկրտչյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Կիևյան փողոց հ.18 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի նախկին ղեկավար Սամվել Բալասանյանի և Միսակ Մկրտչյանի այրի Էդնարա Մկրտչյանի կողմից:

Օրթոպեդ - վնասվածքաբան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ **Քրիստափոր Պետրոսյանը** ծնվել է 1889 թվականին:

Լինելով օրթոպեդիայի և վնասվածքաբանության հիմնադիր Հայաստանում, բժշկական կրթությունը ստացել է Բորդոյի համալսարանում (Ֆրանսիա):

1918 թվականին ծառայել է բանակում, աշխատել է Տաշքենդում:

1930 թվականին հրավիրվել է Երևան և 1932 թվականից ղեկավարել պետական բժշկական ինստիտուտի օպերատիվ վիրաբուժության և վնասվածքաբանության ամբիոնը:

Հայրենական մեծ պատերազմի սկզբին Քրիստափոր Պետրոսյանը նշանակվել է էվակոհոսպիտալների հայկական բազայի գլխավոր վիրաբույժ: Պատերազմի ավարտից հետո նրա ղեկավարությամբ հիմնադրվել է վնասվածքաբանության ինստիտուտը: Նա առաջինն է Հայաստանում կատարել ձեռքի մատների պլաստիկ վերականգնողական վիրահատություններ: Հեղինակ է 60 աշխատության, այդ թվում՝ դասագրքերի ու մենագրությունների: Նրա անունն է կրում օրթոպեդիայի և վնասվածքաբանության ինստիտուտը (Ամիրյան փողոց հ.8):

Քրիստափոր Պետրոսյանը մահացել է 1961 թվականին:

Քրիստափոր Պետրոսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Ամիրյան փողոց հ.8 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ղեկավար Արմեն Մուրադյանի կողմից:

Պետական և հասարակական գործիչ **Բերսաբե Գրիգորյանը** ծնվել է 1916 թվականին:

1945-1947 թվականներին եղել է ՀԽՍՀ Կենտկոմի քիմիական արդյունաբերության բաժնի վարիչ, 1947-1950 թվականներին՝ ՀԽՍՀ Երևանի Ստալինյան շրջկոմի 1-ին քարտուղար, 1950-1953 թվականներին՝ ՀԽՍՀ Կենտկոմի 2-րդ քարտուղար, 1953-1959 թվականներին՝ ՀԽՍՀ Պետպլանի նախագահի տեղակալ, 1959-1967 թվականներին՝ ՀԽՍՀ Արտասահմանյան երկրների հետ միջազգային կապերի ընկերության (AOKC) նախագահ, 1967-1987 թվականներին՝ ՀԽՍՀ Տեղական արդյունաբերության նախարարի տեղակալ:

Բերսաբե Գրիգորյանը մահացել է 2004 թվականին:

Բերսաբե Գրիգորյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Զարոբյան փողոց հ.12 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել նրա դուստր Տատյանա Ղազարյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ**

## **ՏԵՂԵԿԱՆՔ**

**«ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Հուշատախտակների տեղադրման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

## **ՏԵՂԵԿԱՆՔ**

**«ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

«Հուշատախտակների տեղադրման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ**